**Հավելված**
**ՀՀ առողջապահության նախարարի**
**«24» օգոստոս 2022թ.**
**N 3908 - Ա հրամանի**

**ԾՐԱԳԻՐ**

**ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

**«ԱԼԵՐԳՈԼՈԳԻԱ և ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԻՄՈՒՆՈԼՈԳԻԱ» ԹԵՄԱՅՈՎ 4-ՇԱԲԱԹՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

2022թ.-ից կրկնողաբար, ք. Երևան

(«Արաբկիր» ԲՀ ԵԴԱԻ, «Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցային համալիր)

Հայ օգնության ֆոնդ

| Թեմա | Նկարագիր | Տևողություն | Պատասխանատու | Ակնկալվող արդյունք |
|---|---|---|---|---|
| 1. Իմունային համակարգ: Իմուն համակարգի վերաբերյալ ընդհանուր դրույթներ: Իմուն համակարգի բջիջներ, հյուսվածքներ և օրգաններ: Գերզգայունության տիպերը և նրանց կլինիկական նշանակությունը: Անհապաղ տիպի գերզգայունություն՝ I-տիպ: IgE- միջնորդված ալերգիկ ռեակցիաներ, միջնորդանյութեր | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 12 ժամ<br>9:00-15:00 | Արմինե Հակոբյան<br>Աստղիկ Բաղդասարյան | Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան.<br>• Տիրապետել ախտորոշման ժամանակակից մեթոդների հնարավորությունների մասին տեղեկությանը<br>• ախտորոշել շտապ բուժօգնություն պահանջող ալերգոլոգիական/ իմունոլոգիական վիճակները, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. Ալերգիկ հիվանդությունների բուժումը, ժամանակակից մոտեցումները՝ ֆարմակոթերապիա և իմունոթերապիա: Հակահիստամինային դեղամիջոցներ:H1, H2 ընկալիչների անտագոնիստներ: Հակահիստամինային դեղամիջոցների կլինիկական կիրառումը: Ալերգիկ ռինիտներ | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 12 ժամ<br>9:00-15:00 | Արմինե Հակոբյան<br>Աստղիկ Բաղդասարյան | • հիվանդին նշանակել բուժում/ սննդակարգ ժամանակակից ուղեցույցներին համապատասխան, տիրապետել ինհալացիոն թերապիայի մոտեցումներին, ալերգոլոգիական /իմունոլոգիական ախտորոշիչ մեթոդների առանձնահատկություններին:<br>• վարել ծանր, ծայրահեղ ծանր վիճակներում գտնվող հիվանդին,<br>• կիրառել թիմային արդյունավետ հաղորդակցություն՝ հիվանդի անվտանգ և արդյունավետ խնամքը և տեղափոխումն ապահովելու համար: |
| 3. Անաֆիլաքսիա: Կլինիկական դրսևորումները, ախտածագումը, պատճառները, բուժումը: Առաջին օգնության բուժման գործելակարգը / Սննդային ալերգիաներ, ախտորոշման և վարման սկզբունքները առաջնային օղակում և մասնագիտացված կենտրոնում, համագործակցության էտապները: | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 12 ժամ<br>9:00-15:00 | Արմինե Հակոբյան<br>Աստղիկ Բաղդասարյան | |
| 4. Եղնջացան, Անոթայտուց Ախտածագումը, դասակարգումը, կլինիկան, բուժումը:Ժառանգական անոթայտուց / Ատոպիկ մարշ. Ատոպիկ դերմատիտ, ալերգիկ ռինիտ, բրոնխային ասթմա, | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 24 ժամ<br>9:00-15:00 | Արմինե Հակոբյան<br>Աստղիկ Բաղդասարյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ախտորոշման և վարման սկզբունքները առաջնային օղակում, համագործակցությունը մասնագիտացված կենտրոնի հետ: | | | | |
| 5. Բրոնխային ասթմա: Դասակարգում: Ալերգենների և տրիգերների դերը կլինիկական դրևութումների վար , GINA – ուղեցույց: Սպիրոմետրիա / Սուր և քրոնիկ եղնջացաներ / անոթայտուցներ, ժառանգական անոթայտուցներ հազվադեպ հանդիպող այլ ալերգոլոգիական խնդիրեներ, ախտորոշման և վարման սկզբունքները առաջնային օղակում, կապը մասնագիտացված կենտրոնի հետ: | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 18 ժամ<br>9:00-15:00 | Արմինե Հակոբյան<br>Աստղիկ Բաղդասարյան | |
| 6. Դեղորայքային ալերգիկ ռեակցիաները: Հիվանդների հետազոտման և վարման սկզբունքները: Մաշկային դրսևորումների առավել ծանր տեսակները: Դեղորայքային պրովոկացիոն փորձերի իրականացումը մասնագիտական բաժնամունքներում: | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 24 ժամ<br>9:00-15:00 | Արմինե Հակոբյան<br>Աստղիկ Բաղդասարյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Այցելություն Հանրապետական գիտաբժշկական գրադարան (ՀԳԲԳ) | Ժամանակակից բժշկական գրականության և ամսագրերի ընթերցում | 12 ժամ | Աննա Շիրինյան | |
| Դասախոսություններ ՀԳԲԳ-ում | • Բժշկական տեղեկատվության որոնումը համացանցում<br>• Ապացուցողական բժշկություն<br>• Բժշկություն և իրավունք<br>• Ծխախոտային կախվածության բուժում<br>• Կովիդ 19 | 6 ժամ | Մանե Խաչատրյան<br>Ռուբեն Հովհաննիսյան<br>Վիոլետա Զոփունյան<br>Արուսյակ Հարությունյան<br>Նարինա Սարգսյանց | |
| Համակարգչային գրագիտության դասընթացներ[1] ՀԳԲԳ-ում | MS Word, MS Excel, MS PowerPoint ծրագրեր և համացանց | 24 ժամ | | |
| ՇՄԶ արդյունքների ամփոփում[2] | Կլինիկական մեկ դեպքի, մեկ հոդվածի (ռեֆերատ) ներկայացում | 10:00-12:00 | Համբարձում Սիմոնյան | |

[1]Ընտրովի է և ներառված չէ 120 ժամի մեջ:

[2]Որպես ծրագրի բաղկացուցիչ մաս՝ մասնակիցները պետք է ներկայացնեն կլինիկական դեպքի նկարագրություն և ռեֆերատ: Այս հանձնարարությունն իրագործելու համար մասնակիցները կարող են օգտվել Հանրապետական գիտաբժշկական գրադարանի ռեսուրսներից (տպիչներ, համակարգիչներ, համացանց), որոնք ապահովվել են ՀՕՖ-ի կողմից:

**Ընդհանուր նկարագիր** – ՀՀ մարզերից և ԼՂՀ-ից Երևանում վերապատրաստվող բժիշկներն իրենց վերապատրաստման ղեկավարներին ուղեկցում են համայցերի ժամանակ, ինչպես նաև աջակցում են նրանց հիվանդների վարման ընթացքում՝ ներառյալ վիրահատություններն ու պրոցեդուրաներ: Վերապատրաստվող բժիշկները սովորում են նոր մեթոդներ, ծանոթանում նոր տեխնոլոգիաների և գործիքների կիրառմանը, մասնակցում իրենց ոլորտի ամենաթարմ նորամուծությունները ներկայացնող դասախոսությունների և դասընթացների:

Յուրաքանչյուր օրվա ընթացքում նախատեսված է 1 ժամ ընդմիջում, որը ներառված չէ (09:00-15:00) 6 ժամվա մեջ

Թիրախային լսարան՝ ալերգոլոգներ, ընտանեկան բժիշկներ, մանկաբույժներ, թոքաբաններ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 5-10 հոգի: